ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Գլխավոր խորհրդատուն՝

1) իրականացնում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը,

2) իրականացնում է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործընթացը,

3) իրականացնում է պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու գործառույթը,

4) իրականացնում է պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում,

5) իրականացնում է կատարողական գործողություններ՝ հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի դրույթները,

6) որպես փորձաշրջանի համակարգող, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձին օգնում է ծրագրով նախատեսված գործառույթների իրականացման հարցում, ծանոթացնում այդ գործառույթների արդյունավետ կատարման եղանակներին, աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ընթացակարգերին,

7) իր գործառույթներն իրականացնում է «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ, 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների և պարտականությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է Ծառայության կանոնադրական խնդիրներից և նպատակներից բխող այլ գործառույթներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջներ.

Հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, որն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: